ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՀԱՐԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

10.11.2020թ
Ե/361-2020

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 20.01.2020թ թիվ 01/107.3/00404-2020 գրությանը ներկայացնում ենք ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի ավագանու 2020թ նոյեմբերի 11-ին կայանալիք նիստի վերաբերյալ տեղեկացումը, ավագանու կայանալիք նիստի օրակարգը, նիստում քննարկվելիք հարցերի վերաբերյալ ընդունվելիք որոշումների նախագծերը՝ ըստ կից հավելվածների:

Առդիր՝ 19 էջ:

Համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ
Սարահարթ համայնքի ավագանու նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Սարահարթ	Ավագանու նիստ	11.11.2020թ	11:00	Սարահարթի համայնքապետարանի նիստերի դահլիճ (Սարահարթ համայնք 10փ 1նրբ. 12)

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքային սեփականության հողամասը աճուրդ վաճառքով օտարելու մասին
2. Համայնքային սեփականության գույքն օտարելու համաձայնություն տալու մասին
3. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում 2021թ համար տեղական տուրքերի եվ վճարների տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին
4. Սարահարթ համայնքի սեփականության 2020թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
5. Լոռու մարզի Սարահարթ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, առաջնորդվելով Սարահարթ համայնքի ավագանու կանոնակարգի 4-րդ մասի 17 կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սարահարթ համայնքի ավագանու 2020թ նոյեմբերի 11-ի նիստի օրակարգը:

1. Համայնքային սեփականության հողամասը աճուրդ վաճառքով օտարելու մասին
/Զեկ. Ա. Փիլոյան/

2. Համայնքային սեփականության գույքն օտարելու համաձայնություն տալու մասին
/Զեկ. Ա. Փիլոյան/

3. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում 2021թ համար տեղական տուրքերի եվ վճարների տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին
/Զեկ. Ս. Կիրակոսյան/

4. Սարահարթ համայնքի սեփականության 2020թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
/Զեկ. Ս. Կիրակոսյան/

5. Լոռու մարզի Սարահարթ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին
/Զեկ. Ս. Կիրակոսյան/

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ
ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով ՀՀ ‹‹Հողային օրենսգրքի›› 67-րդ հոդվածի 1-ին կետով, 76-րդ հոդվածի 3-րդ կետով, ‹‹Տեղական ինքնակառավարման մասին›› ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-ն որոշմամբ հաստատված կարգով՝ հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ համաձայնություն Սարահարթ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության գործառնական նշանակության վարելահող հողամասը աճուրդ վաճառքով օտարելու մասին Սարահարթ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
   06-097-0116-0009 կադաստրային ծածկագրով, 1.55405 հա մակերեսով, 1 085 000/Մեկ միլիոն ութսունհինգ հազար/ ՀՀ դրամ մեկնարկային գնով, լոտի մասնակցության վճարը սահմանել 1000 ՀՀ դրամ, քայլի չափը 54 250 ՀՀ դրամ, նախավճարը սահմանել 54 250 դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդ վաճառքով օտարվող հողամասի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ա. Փիլոյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 35-րդ հոդվածի 18-րդ կետերով սահմանված դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և գույքի գնահատող ԱՁ Արտյոմ Սաքանյանի N 01 հաշվետվությունը՝

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սարահարթ համայնքի սեփականություն հանդիսացող 2003թ. արտադրության VOLKSWAGEN TOUAREG 3.2 մակնիշի մարդատար ավտոմեքենան աճուրդով օտարելու Սարահարթ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Գույքի մեկնարկային գին սահմանել գույքի գնահատող ԱՁ Արտյոմ Սաքանյանի կողմից գնահատված 1800300 ՀՀ դրամ գինը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021Թ ՀԱՄԱՐ
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ,
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ս. Կիրակոսյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով ,<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի2-րդ մասով

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքում 2021թ համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Արդարադատության նախարարություն ՝պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված՝
ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի
ավագանու 2020թ նոյեմբերի 11-ի թիվ -Ն որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021Թ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 13 000 /Տասներեք հազար դրամ/,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25 000 /Քսանհինգ հազար դրամ/
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 /Հիսուն հազար դրամ/
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 75 000 /Յոթանասունհինգ հազար դրամ
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 000 /Հարյուր հազար դրամ/

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3 000 /Երեք հազար դրամ/
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5 000 /Հինգ Հազար դրամ/

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 /Երեք հազար դրամ/

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ

թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 /Հինգ հազար դրամ/

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 80 000 /Ութսուն հազար դրամ/

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 45000 /Քառասունհինգ հազար դրամ/

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 /Հիսուն հազար դրամ/

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 /Մեկ հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 /Հինգ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13 000 /Տասներեք հազար դրամ/,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 /Քսան հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25 000 /Քսանհինգ հազար դրամ/,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 /Քառասունհինգ հազար դրամ/.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500 /Հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 /Հինգ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13 000 /Տասներեք հազար դրամ/,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 /Քսան հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25 000 /Քսանհինգ հազար դրամ/,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 /Քառասունհինգ հազար դրամ/.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 50000 /Հիսուն հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 75000 /Յոթանասունհինգ հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝200000 /Երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ 500000 /Հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 250000 /Երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 100000 / Մեկ հարյուր հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝2000 /Երկու հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 /Հինգ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 /Տասը հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 /Տասնհինգ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 /Քսան հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 /Երեսուն հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 /Երեք հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 /Մեկ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 /Երկու հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝4000 /Չորս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 /Ութ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 /Տասնհինգ հազար դրամ.

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /Երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝3500 /Երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 /Մեկ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների

արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 /Երեսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 /Հինգ հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝100 000 / Մեկ հարյուր հազար դրամ.

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 750000 /յոթ հարյուր հիսուն հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝5000000 /հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 /յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 /տասը միլիոն դրամ.

2.Տեղական վճարներ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել քսան հազար դրամ:

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երկու հազար դրամ:

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել ինը հարյուր դրամ:

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երկու հազար դրամ:

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել Մեկ հազար դրամ:

6)համայնքի կողմից ֆիզիկական անձանց համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել մեկ հարյուր դրամ մեկ ամսվա համար:
7) համայնքի տարածքում գործող իրավաբանական անձանց և տնտեսվարող սուբյեկտների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել մեկ քառակուսի մետրի համար.
ա/ առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 30դ
գ/արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ 5դ
դ/ կրթական, մշակույթային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ՝
2դ
8)ոռոգման ջրի մատակարարման համար՝ տաս հազար դրամ մեկ հեկտարի համար:
9)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար սահմանել մեկ հարյուր դրամ:
10)համայնքը ապասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց սահմանել հետևյալ վճարները

	Անասնաբուժական ծառայության անվանումը	Գինը /դրամ/
1	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն	500-1000
2	Ծննդօգնություն 1. թեթև միջամտություն 2. ծանր միջամտություն	1000-2000 5000-20000
3	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)	Մանր կենդանի 100-200 Խոշոր կենդանի 200-500
4	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար	200-1000
5	Ախտահանություն	1 քառ. մետր 200-300
6	Միջատազերծում (դեզինսեկցիա)	1 քառ. մետր 100-200
7	Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)	1 քառ. մետր 200
8	Արհեստական սերմնավորում	5000 - 7200
10	Կենդանու հերձում	մանր կենդանի 1000 խոշոր կենդանի 3000

11	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից	Յուրաքանչյուր այցելությունը 1000-2000
12	Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից	մանր կենդանի 1000 խոշոր կենդանի 2000

ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
2020Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ս. Կիրակոսյան/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով Սարահարթ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Սարահարթ համայնքի սեփականության 2020թ-ի գույքագրման փաստաթղթերը ՝ համաձայն հավելվածի:

Հավելված
Սարահարթ համայնքի ավագանու
2020թ նոյեմբերի 11-ի թիվ --- որոշման

ՔԱՂՎԱԾՔ

Սարահարթ համայնքի համայնքային սեփականության գույքի գույքագրման փաստաթղթերից

հ.հ	Ապրանքանյութական արժեքների անվանումը	չափի միավ.	գինը	փաստացի կանխիկ		Հաշվ. Հաշվ տվյալներ	
				քանակ	գումար	քանակ	գումար
1	գրասենյակի շենք	հատ	նվիրատվ.	1		1	
2	ջեռուցման համակ.	հատ	նվիրատվ.	1		1	
3	համակարգիչ(Դելլ)	հատ	նվիրատվ.	3		3	
4	սքաներ	հատ	նվիրատվ.	1		1	
5	պրինտեր	հատ	Նվիրատվ.	1		1	
6	Գրասեն. սեղան	հատ	280000	1	280000	1	280000
7	Գրասեն.սեղան	հատ	45833	4	220000	4	220000
8	Գրասեն. պահարան	հատ	54166	5	270 800	5	270 800
9	կաշվեպատ բազկաթ.	հատ	130000	1	130000	1	130000
10	աթոռ կտորապատ	հատ	12500	9	112500	7	112500
11	համակարգիչ	հատ	160000	1	160000	1	160000
12	մոնիտոր	հատ	58000	1	58000	1	58000
13	տպիչ	հատ	102500	1	102500	1	102500
14							
15	ստեղնաշար	հատ	6000	1	6000	1	6000
16	դինամիկ	հատ	5000	1	5000	1	5000
17	մկնիկ	հատ	3000	1	3000	1	3000
18	քարթրիջ	հատ	38000	1	38000	1	38000
19	ֆլեշ հիշողություն	հատ	5500	1	5500	1	5500
20	ԳԱԶ 3110	հատ	93000	1	93000	1	93000
21	տրակտոր դ5-75	հատ	128300	1	128300	1	128300
22	Մկնիկ	հատ	3200	1	3200	1	3200
23							
24	սեղան դիմադիր	հատ	120000	1	120000	1	120000
25	Աթոռներ	հատ	12500	11	137500	11	137500
26	Վոլսվագեն տուարեկ	հատ	1800300	1	1800300	1	1800300
27	Հեռուստացույց	հատ	220000	1	220000	1	220000
28	Հեռուստացույցի տակդ.	հատ	130000	1	130000	1	130000
29	Բազկաթոռ օֆիսային	հատ	50000	2	100000	2	100000
30	Աթոռ պաստառապ.	հատ	25000	14	350000	14	350000

31	աղբարկղ	հատ	նվիրատվ	17		17	
32	աղբարկղ	հատ	40000	9	360000	4	360000
33	թենիս	հատ	60000	1	60000	1	60000
34	գրասենյակային աթոռ	հատ	5000	58	290000	58	290000
35	Փողոցների լուս. համ.	հատ	300000	1	300000		300000
36	Խողովակ Ф50	մ	1665	600մ	999000	600մ	999000
37	Փողոցների լուսավորման համակարգ	հատ	78500	110	8635000	110	8635000
38	շերտավարագույրներ	քմ	5000	13քմ	65000	13քմ	65000
39	Պրինտեր ՄՖ3010	հատ	150500	1	150500	1	150500
40	Պրինտերի ընդունիչ	հատ	3900	1	3900	1	3900
41	Քարտրիջ ՄՖ 3010-ի համար	հատ	5000	1	5000	1	5000
42	Օպերատիվ հիշողություն ԴԴՌ3	հատ	8000	1	8000	1	8000
43	տոնածառ	հատ	260000	1	260000	1	260000
44	Փողոցների լուսավորության համակարգ LED	հատ	140000	40	560000	40	560000
45	Գրասենյակային սեղան տակդիրով	հատ	65000	1	65000	1	65000
46	Ֆոտովոլտային կայան 15կՎտ հզորությամբ	հատ	5764000	1	5764000	1	5764000
47	Լարման ստաբիլիզատոր	հատ	111000	1	111000	1	111000
48	Հոսանքի անխափան սարք	հատ	25000	2	50000	2	50000
49	դինամիկ	հատ	7500	2	15000	2	15000
50	գրապահարան	հատ	66000	5	330000	5	330000
51	Ոռոգման ներքին ցանցի կիսախողովակներ	գծմ	16150000	851.9գծմ	16150000	851.9գծմ	16150000
52	Խմելու ջրի հավաքման հորեր 1խմ	հատ	1075765	4 հատ	4303060	4	4303060
53	Խմելու ջրի պարզարան 13.5խմ	հատ	2900000	1հատ	2900000	1	2900000
54	պողպատյա խողովակ Ф76	մ	3120	430	1341600	430	1341600
55	պողպատյա խողովակ Ф57	մ	2510	84	210840	84	210840
56	պողպատյա խողովակ Ф108	մ	4150	30	124500	30	124500

57	Մետաղյա խողովակ Φ76	մ	180	2500	450000	180	450000
58	դիտահոր	հատ	2	108120	216240	2	216240

ՆԱԽԱԳԻԾ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ս. Կիրակոսյան/

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 09-ի <<ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 52-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Սարահարթ համայնքի ավագանու
«11» նոյեմբերի 2020 թվականի N որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Գրիգորյան Աննա –երեսուն հազար դրամ, սոց. օգնություն
2. Արոսյան Զոյա – երեսուն հազար դրամ, սոց. օգնություն
3. Քոթանջյան Սյուզաննա – երեսուն հազար դրամ, սոց. օգնություն
4. Վերմիշյան Անահիտ- երեսուն հազար դրամ, սոց. օգնություն
5. Կասեմյան Ռուզաննա- երեսուն հազար դրամ, սոց. օգնություն
6. Սիմոնյան Գեղամ- երեսուն հազար դրամ, սոց. օգնություն
7. Մադանցյան Մարինե- երեսուն հազար դրամ, սոց. օգնություն
8. Ջանազյան Արսեն- երեսուն հազար դրամ, սոց. օգնություն
9. Բարիկյան Թաթուլ- երեսուն հազար դրամ, սոց. օգնություն